**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14**

**ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության**

**06.06.2019թ.** **ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

Գ.Մարկոսյանը - մարզպետի տեղակալ

Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Է.Հախվերդյանը, Լ.Բերոյանը, Ս.Ղուբաթյանը, Գ.Բաղդասարյանը, Ա.Աղլոյանը, Հ.Հակոբյանը, Ա.Եղիազարյանը, Հ.Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք

Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական

Լ.Տեր-Սիմոնյան -մարզպետի խորհրդական

Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

**Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝**

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Գ. Մարկոսյան, Վ. Խաչատրյան, ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց**

**1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝**

ա) Ակտիվ մասնակցություն ունենալ ս/թ հունիսի 8-ին նախատեսվող համապետական շաբաթօրյակին.

բ) Անձնական պատասխանատվություն կրել տրված հանձնարարականների պատշաճ և սահմանված ժամկետներում կատարման ուղղությամբ:

**2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝**

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզային ենթակայության կազմակերպությունների կողմից համայնքների ղեկավարների հետ համագործակցությամբ համապետական շաբաթօրյակին ակտիվ մասնակցություն ապահովելու նպատակով:

**3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին՝**

ՍԾՏԳ-ներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ բացահայտված թերությունների համար պատասխանատու անձանց նկատմամբ տույժեր կիրառելու վերաբերյալ:

**4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝**

Համայնքներից ստացվող սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ նախապես կազմակերպել քննարկումներ, անհրաժեշտության դեպքում ներկայացնել նոր կամ այլ առաջարկություններ:

**5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝**

Համայնքներից պահանջել և հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել համայնքների հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվություն:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ** **Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Արձ. Ս. Մակարյան

Հեռ. 0322 /4-32-99/